

քուստ ծիծաղախաւ գոյնն, որ քարշումէ դէպի իրան ինչպէս մագնիստն երկաթին, միմիայն նրանցը՝ որոնք փոքր ի շատէ զգումեն ու ճանաչումեն նորա յարգն ու ճաշակն:

Այս անշամանգաղ լուսոյ ճառագայթն՝ կծագի արդեօք և նոր Բայազիդու գաւառի զիւրօրեից բնակչաց մէջ, որոնք լոկ կլսեն թէ Վթուղթն ու մուրն, գործիք են զրազրութեան, բայց ինքեանք զուրկ միանգամայն, ու բոլորովիմբ անհոգ իւրեանց մատաղահաս զաւակների կրթութեան համար, փոխանակ զի երբ մատղաշ հասակին մէջ հարկաւոր է անպատճառ ճանաչացնել երեսային գիտութեան ճաշակն, որպէս զի՝ ինքն զինքն ճանաչելուց յետոյ, ճանաչի և ազգութիւն, ընդ հակառակն զի ու տարիքն չհասած հինգ տարուան՝ պարապացնումեն ողորմելուն անական գործերուն մէջ, նստուցանելով երկու եղանց լծան վերայ երկիր հրքերու, ու էսպէս շրջանը պտտուելով միշտունն ճնշուած խաւար տգիտութեան քողի ներքեւ, ամէն մի քայլ փոխելով այս ժողովուրդոց մէջ՝ մարդ տիգահար է լինում, երբ տեսնումէ մանաւանդ ամբողջ զիւրի մէջն, որ բաղկանում է աւելի մի հարիւր յիսուն բնակիչ տանց, չկայ մէկ անձն, որ իւր անունն դէթ ստորագրել կարողանայ, «Հայ եմ կասէ ազգաւ», Բայց՝ ինչ է հայութիւնն պատմող չկայ, ամէն մի Հայ երիտասարդին սիրան է խոցոտվում այս յետեալ հոգեվարքի կիսամահ ժողովուրդին նայելով, ամենիս յայտնի է, որ յանցաւորներն իւրեանց անկշռելի մեղքերիցն ազատվում են Վոստոյանութիւնով, քահանայից առջեւ, մահազուշակ տկարները առողջութիւն են ստանում Վեղորայքով, հմուտ բժիշկների ձեռքով, իսկ այսպիսի խաթամութ ժողովուրդն ընչով պիտի արթնանայ մառախլապատ կորստեան թմրութիւնիցը . . . ո՛չ ապաքէն և սոքա ազգութեան մի անդամն են, ի՞նչ վշտանայ մի անդամն, վշտանան և ամենայն անդամք ընդ նմա, ու էսպէս ուժը ու զօրութիւնը բոլոր անդամոց օրէ ցօր նուազելուց յետոյ, պատճառ է լինում նեթարկելոյ մարդին մահահարաւոր տկարութեան ներքեւ, այնուհետեւ և ո՛չ մի բժշկական զեղորայք՝ չեն ունենալ իւրեանց բնական ներգործութիւնը յետին թոշակից յետ դարձնե-

լու, ամէն մի ուսումնական անձն պարտաւոր է ազգասիրական հոգեով ցաւել այս ուժամալի ժողովուրդին վրայ, և որոնի հնար ոտի կանգնելու, Այսուամենայնիւ ազգը յոյսը գնելով իւր արթնուն ազգապետի վրայ, անտարակոյս է, որ չի թողուլ սրանցը և սրանցից սերեալ զաւակները, մնալնոյն զրութեան մէջ, ինչպէս այժմ տեսնումենք:

Վասնորոյ Հայաստանն թող այսուհետեւ հըրձուի որ երկար տարիներից յետոյ, ստացաւ իւրեանը այնպիսի մի պետ, որ իւր ուսումնասէր հոգեոյ հռանդեամբը խրախուսումէ մեղ ճանաչել գիտութեան արժէքը և ազգի յարգը ու փառքը:

Հայ «Տ» Աշխարհիչի

Ի 6² Հ-Ի-Բ-Ե-Բ-Ե 1871 - Դ

Ի Նոր Բայազիդ.

ԵՐԵՒԱՆԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻՄԻԱՐԴԻԻՆՔ

Խօհաբեր-Բէան Աշխարհ Ահաբերոյ

Այս անցեալ Ապրիլի 2ին կարգացինք Վեղու Հայաստանի, պատուական լրագրի մէջ, համար 12. Մարտի 27. տպեալ՝ մի յօդուած, մեր Երեւանու Հոգեւոր Դպրոցին Աղէքսանդրապոլից հասանելի գումարի մասին Պ. Բագարատ Մելիք Սարգսեանցի գրած: Պարզն ասեմ շատ զարմացայ տեսնելով՝ որ մի այսպիսի անյայտ աղբիւր է գտնվում մեր Հ. Դպրոցին, բայց՝ կարծիքս փառապելու համար, սրբազան գործ համարեցի անշուշտ գնալ ուր հարկն էր, և անձամբ անձին տեղեկանալ: Որեւ իսկապէս գնացի քանի մի միջոցի յետ տեղւոյս Թեմ. Բարձր սրբազան Մկրտիչ Արքեպիսկոպոսի մօտ՝ ո՛ւր զանազան բաներ խօսելուց յետոյ, խօսեցինք և Դպրոցի ներկայ աննախանձելի զրութեան վերայ՝ ի շարս որոյ և առաջարկեցի Ս. Հօրը կարգաւ Արքեպիսկոպոսի մօտ, — կարգալէն զկնի պատասխանեց նորին Բարձր Սրբազնութիւնը, որ Վիթէ չ'գիտէք դո՛ւք որ մեր Դպրոցը այսպիսի գումար չէ ստանում, ո՛ւր էր, երանի՜ մի այդպիսի աղբիւր լինէր որ մեծ նպաստ կարող էր լինել մեր Դպրոցին, սորանից ևս քանի մի միջոց անցնելէն զկնի զիմեցի

և առ Մեծապատիւ Հոգաբարձութիւնն Դպրոցի, որոնց մօտ նոյնպէս՝ կարծիքս ի դերե եղաւ, վերջապէս ճարահատութիւնիցս ստիպուած՝ այժմ՝ դառնումեմ ուղղակի դէպի նոյն յօգուածի հեղինակը և ասում՝ որ դուք Մեծարգոյ Պ. Մելիք Սարգսեանց՝ գրումէք թէ, «Բացի (Երեւնայ Հ. Դպրոցը) իւր իսկական եկամուտներից «Աղէք» տանդրապօլու վիճակից ևս տարեկան բաւականին «օգուտներ է ստանում» այժմ մենք հրապարակաւ պատասխանումենք Ձեզ, դուք որ այդ օգուտները ցոյց էք տալիս՝ մեր Հ. Դպրոցը երբէք չէ ստացել. բացի Մետրիքական վկայականներից, դուք Յարգոյ պարոն. ընթերցող հասարակութեան ամբողջի մէջ, ո՛ւր ամենայն աղնիւ և անաղնիւ գործքերը յերեւան են դուրս գալիս՝ համարձակապէս ասումէք «որ 1866 թուից մուտ «գործելով Տեղւոյս Հ. Պատավարութիւնն Անդամական պաշտօնով՝ անխափան ստացել է իւրաքանչիւր պատկառելիներից քսանական կոպէկ «յօգուտ սոյն Դպրոցին, իսկ ամեն մի տարում պատահումէ մեր քաղաքում կամ իւր վիճակում «1000ից աւելի պսակ» վերջապէս՝ ինչպէս ասացի որ մեր Նրեանի Հոգեւոր Դպրոցը երբէք չէ ստացել և ո՛չ մի տարի այդպիսի մի գումար, բայց թէ, ի՞նչպէս է եղել այդ գումարը որ չեն հասցրած, կամ թէ ի՞նչտեղ է մնացել որ չէ ստացուած. մենք այդ չ՛գիտենք, և չեմք ևս պատասխանատու, այլ՝ այս Ձեր ամենասրբազան և և վսեմ՝ պարտականութիւնը պիտի լինի, աշխատել որ յերեւան հանէք, (որովհետեւ՝ կարելի է մի այնպիսի մէկի մօտն է որ լաւ է համարել իւր անձնական օգտին գործադրել՝ քան թէ հարկւրաւոր անմեղ և անտէրոնջ մանուկների ուսման և բարոյական զարգացումը ընդարձակել): Աերջապէս, Դո՛ւք Մեծապատիւ Պարոն. ինչպէս հաստատում էք հրապարակի ընթերցողաց առջև՝ ուրեմն պիտո՛յ է Ձեզ նոյնը և իրագործել, որ աւելի հաստատ և անհրաքելի լինի Ձեր ասածը, որովհետեւ այս մի այնպիսի բարձր գործ է, որի ամեն մի կոպէկը միշտ սեփական հազարաւորի տեղ պիտո՛յ է հաշուիլ՝ իսկ այնպէս չ՛հաշուողներ, մեզ նման թշուառ ազգի անմեղ զաւակներին հօգուով և մարմնով, սերունդից սերունդ պարտական են մնում:

Յուսով եմ որ կ'բարեհաճիք տեղի շնորհել պատուական «Արարատայ», էջերի մէջ՝ այս ամենա հարկաւոր վերոյիշուալ յօդուածի պատասխանը:

ԱՔԳՐ ՊԱՏԱՅԻՆՆԵՅ:

Ի 28Ն ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1871 ՎԻ:

ՅԵՐԷԱՆ

ՅԱԽԼՅԻԱՅԻ ՕՐԻՈՐԻԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ ԸՆԹԵՐՏՈՒԱԾ ՃԱՌԵՐԸ:

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆՔ:

Ներկագործ մշակին ինչպէս իւր արուեստն զըլխաւորելու համար երկու ամենակարեւոր պէտք կան, նախ՝ սերմն և ապա երկիր, (վասն զի՝ առանց սերման երկիրն է ապարդիւն անապատ, և առանց երկրի սերմն է հատ մերկ առանց տասանորդական արդեանց.) այսպէս ևս ազգի մի յառաջադիմութեան խնամոց ուղղութիւնն ձեռք առնող հոգաբարձուաց երկու միջոց կայ իւրեանց նպատակին հասնելու՝ դաստիարակութիւն տղայոց և դաստիարակութիւն աղջկանց, գիտութիւն արանց և գիտութիւն կանանց, վասն զի՝ մէկն առանց միւսին անկատար է: Արդէ՛ր կրթութեանց ենթարկելիքներն, տղայոց յառաջեցուր գիտութեանց մէջ, իսկ աղջկանց դատապարտէ տգիտութեան խաւարին բանտում, կ'նշանակէ հոգսդ երկրագործ մշակի նման սերման և երկրի վերայ միահաւասար չիս բաշխած, այլ միմիայն սերմն հատընտիր՝ երկիր չուիս պտղաբերող: Ընչհակադարձն ինամբ և հոգողութիւնդ աղջկանց դաստիարակութեանն նուիրէ միայնակ, ոյն ժամանակ կ'տեսնես ներկագործուած երկրիդ պարարտահող ակոսներում չուիս ընդեղեններ սերմանելու ուստի և ոչ երկրագործական աշխատութեանդ շահ և վաստակ ստանալու կարող վիճակի մէջ կ'գտնուիս: Այս այնպիսի մէկ դրական ճշմարտութիւն է, որոյ վիպյներն օր ըստ օրէ կը բազմապատկուին ամենայն ազգաց մէջ իւրեանց ընտանեկան կենաց փորձելով, և միաժայն կ'խոստովանին՝ որ նախորդ դարուց և ժամանակաց մարդիկ շատ սխալած են եղել իւրեանց ազգային յառաջադիմութեանց էակոն պայմաններն միմիայն տղայոց դաստիարակութեան խնամոց մէջն որոնել և նկատել, աղջկանց իբրեւ սորկաց և ծառայից անարժան համարելով հաղորդակցել գիտութեանց սեղանոյ անդարար միջոցանցն: Աւ ի՞նչ տարակուսութեան տեղիք կայ այստեղ. ստրուկն ստրուկ կ'ծնանի և ազատն ազատ մի՞թէ ի մարենոյ քաղն խաղող և ի տատասկէ թուղ. մի՞թէ այդ միայն է ծնող որդւոյ. մի՞թէ կինն միայնակ բա-